# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը Հայոց լեզվի և Գրականության դասերին

Կազմեց՝ Նաիրա Մարտիրոսյան

Դպրոցի անվանում՝ Արծվանիկի միջն. Դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

՝Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն_____2

Գրական ակնարկ_____3

Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը Հայոց լեզվի և Գրականության դասերին_____5

Օգտագործված գրականության ցանկ_____15

## Ներածություն

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ

դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի օգնության։

**Էլբերթ Հաբարդ**

**Թեմայի արդիականությունը։** Վերջին տարիներին ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել տարբեր մեթոդներ, որտեղ իր ուրույն տեղն է զբաղեցնում ուսուցման ակտիվ մեթոդները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունն՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքներին։

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերումն է։Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ կիրառելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են՝

. պրոբլեմային իրավիճակի ստեղծումը,

. հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ։

Ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ իսկ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով։ Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը։

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը։

**Հետազոտության նպատակը։** Ուսումնասիրել և վերլուծել ուսուցման ակտիվ մեթոդների առանձնահատկությունները և բացահայտել դրանց կիրառման արդյունավետությունը, դաստիարակչական ներգործությունը աշակերտների վրա միջին դպրոցում։

**Հետազոտության ծավալը։** Հետազոտությունը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։

## Գրական ակնարկ

Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ։ Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ։ Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը։ Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները։ Ակտիվ մեթոդների կիրառման **նպատակն** է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները։ Ակտիվ մեթոդների **նպատակն** այն է, որ գիտելիքների ու հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը)։ Դրանք զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ։

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությունը։ Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ։ Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ։ Ակտիվ ուսուցման սկզբունքները.

. Խնդիրների առաջադրման մոտեցմամբ ձևավորված ուսուցումը նպաստում է սովորողների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը։ Տեսությունը ներառվում է նաև առաջադրված խնդիրների լուծման ճանապարհով ուսուցման տեսակետը, սակայն այն բացահայտվում է ավանդական մեթոդների հենքի վրա։

. Պլանավորված կրթությունը անհատական դասընթացների հիման վրա զգալի ներդրում է ունեցել կրթության անհատականացման մշտական գործում, ինչը համակարգչային տեխնոլոգիաների և հեռավար ուսուցման զարգացման հետ կապված նոր խթան է ստացել։

. Կոնտեքստային ուսուցումը հետ է մղվում գործունեության տեսության դրույթներից, որին համապատասխան՝ հասարակական փորձի յուրացումը իրականացվում է անձի ակտիվ, բուռն գործունեությամբ։ Կոնտեքստային ուսուցման մեջ ամրագրված են հետևյալ սկզբունքները՝ անձի ակտիվություն, պրոբլեմատիկություն, ուսուցման և դաստիարակության համամիասնություն, կրթական գործունեության տեսակների և մասնագիտական գործունեության պայմանների հետևողական մոդելավորում։ Կոնտեքստային ուսուցման պարագայում առաջարկվում է մեծապես օգտագործել **ակտիվ ուսուցման** մեթոդները։

Խաղային ուսուցումը ապացուցել է խաղերի, մրցույթների, խմբային մեթոդով ուսուցման բարձր արդյունավետությունը։

Կախված նրանից, թե որ մեթոդով են սովորողները ստիպում ներկառուցել իրենց ձեռք բերած նոր գիտելիքները, հմտությունները կամ վերաբերմունքը, սովորաբար տարբերակվում է ուսուցման երեք տիպի՝ հիմնական, իրավիճակային և հիմնախնդիրների լուծման վրա։

## Հիմնական ակտիվ ուսուցում

Ուսումնառության ակտիվ գործընթացներից շատերն այս կատեգորիայի մեջ են մտնում։ Դրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ սովորողներին ուսուցանվում է այն տեղեկատվությունը, հմտությունը կամ վերաբերմունքը, որը նրանք նախատեսում են ձեռք բերել, իսկ ավելի ուշ նրանց առաջ է գալիս մարտահրավեր, որի ընթացքում նրանք պետք է օգտագործեն այս նոր գիտելիքները։ Այս ակտիվ ուսուցման ոճում օգտագործվող մարտահրավերները կարող են շատ բազմազան լինել։ Որոշ օրինակներ են սովորողների շրջանում բանավեճերի առաջացումը կամ ձեռք բերված նոր հմտությունների գործնական կիրառումը։

## Իրավիճակային ակտիվ ուսուցում

Ակտիվ ուսուցան այս Ակտիվ ուսուցման այս տեսակը հիմնված է ԼևՎիգոտսկու աշխատանքների վրա, ով պարզեց, որ գիտելիքների ստացումը կարող է ավելի արդյունավետ լինել, երբ մարդն ընկղմվում է մի համայնքում, որտեղ այլ անձինք փորձում են սովորել իր նման։ Այս եղանակով իրավիճակային ակտիվ ուսուցումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սովորողը հնարավորություն ունի փորձի, տպավորությունների կամ գաղափարների փոխանակում այն թեմայի շուրջ, որը նա փորձում է տիրապետել նույն ուղու վրա գտնվող այլ մարդկանց։ Երբ նման իրավիճակ լինի, որոշ սովորողներ կստանձնեն <<ուսուցչի>> դեր, իսկ ավելի նորերը կսկսեն հիմնականում լսել՝ հարցեր տալով և իրավիճակներ ներկայացնելով։ Ժամանակի ընթացքում նրանց գիտելիքների մակարդակը կբարձրանա մինչև նրանք կարողանան նաև ստանձնել ուսուցիչների դերը։

## Խնդիրների լուծման հիման վրա

տեսակն այն է, ինչը բոլորից շատ ազատություն է տալիս սովորողներին։ Սովորողներին ներկայացվում է մի խնդիր, որը նրանք պետք է լուծեն, կապված այն ունակության, գիտելիքների կամ վերաբերմունքի հետ, որը նրանք նախատեսում են ձեռք բերել, բայց

նրանց ոչ մի ցուցանակ չի տրվում, թե ինչպես գտնել լուծումը: Այսպիսով, սովորողները պետք է կարողանան գտնել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է խնդիրը լուծելու համար, թե ինչ գործողություններ պետք է իրականացնեն: Եթե դրանք հաջողության հասնեն, կլինի երկարատև և արմատավորված ուսուցում:

## Ռազմավարություն

Կան բազմաթիվ ռազմավարություններ, որոնց կարելի է հետևել՝ ակտիվ ուսուցումը խրախուսելու համար: Դրանց մեծ մասը կարող է իրականացվել ավանդական դասարանում, հատկապես նրանք, որոնք կապված են այն ուսուցման ոճի ամենահիմնական մոդելի հետ: Ամենակարևորներից մի քանիսը հետևյալն են՝

. սովորողներին ուսուցիչների դերի մեջ դնել այնպես, որ նրանք սովորածը փոխանցեն իրենց դասընկերներին,

. սովորողներին հանձնարարվի քննարկել իրենց ձեռք բերած գաղափարները, որպեսզի նրանք կարողանան տեսնել այլ հեռանկարներ և դրանք ավելի արդյունավետ ներդնել,

. առաջարկվի խնդիրներ, որոնք սովորողները պետք է կարողանան լուծել դասի ընթացքում ձեռք բերած նոր հմտություններով և գիտելիքներով:

## Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը Հայոց լեզվի և Գրականության դասերին

**Ակտիվ ուսուցում-**իրենից ներկայացնում է այնպիսի ուսումնական գործընթացի կազմակերպում և կառավարում, որը նպատակաուղղված է սովորողների կրթական և ճանաչողական գործունեության լիարժեք ակտիվացմանը ինչպես մանկավարժական,այնպես էլ կազմակերպական- կառավարման լայն, համակողմանի գործիքակազմով:

Ուսուցման ակտիվացումը կարող է հանգեցնել ինչպես ուսուցման ձևերի և մեթոդների բարելավմանը, այնպես էլ ուսուցման գործընթացի կազմակերպման և կառավարման եղանակների կամ պետական կրթական համակարգի կատարելագործմանը: Լուրջ դրական վերջնարդյունքների հասնելու նախապայմանը համարվում է բարձրագույն ուսումնական կառույցների և պատասխանատու պետական մարմինների ակտիվ մասնակցությունը ինչպես մանկավարժական, այնպես էլ ղեկավարման ակտիվացման գործընթացին, այսինքն՝ ուսուցման գործընթացի բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը՝ չբացառելով հենց նրանց կողմից տարբեր միջոցների և մեթոդների ավելի լայն ներդրումն ու կիրառումը:

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման ՄԵԹՈԴՆԵՐԸ դասակարգվում են **3 խմբի.**

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)

2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)

3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)**:**

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող **բանավոր, գրավոր** ստուգումներ և ինքնաստուգումներ։

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ։

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված ենմատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն։

**Ակտիվ մեթոդ.** սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ։ Եթե պասիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է,ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են։




Ուսուցման ակտիվ մեթոդներն են՝

. խճանկար

. պրիզմա

. բանավեճ

. մտագրոհ

. վենի դիագրամ

. ԳՈՒՄ

. գործնական և դերային խաղեր

. նախագծային մեթոդ

. Т-աձև աղյուսակ

. գաղափարների քարտեզագրում

. մտածի՛ր զուգորդիր, մտքերի փոխանակիր

. խմբավորում

. փոխներգործուն նշանների համակարգ

. աշխատանք փոքր խմբերով

## Խճանկար

Մեթոդի նպատակն է՝

. ուսուցանվող նյութի որոշակի հատվածի, հիմնախնդրի ուսումնասիրում

. դրանց ուսուցանում դասընկերներին

Մեթոդի փուլերն են՝

. նյութի ուսումնասիրում և տեղեկատվության հավաքում

. աշխատանք փորձագիտական խմբում

. աշխատանք հենակետային խմբում

. ավարտական աշխատանք

. աշխատանքի ամփոփում

## Պրիզմա

Մեթոդը կիրառվում է դասի սկզբնական, խթանման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ազատ և անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Մեթոդը արդյունավետ է, կարճ, համառոտ բառերի, հատկանիշների թվարկման ժամանակ: Մեթոդի կիրառումը ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկզկզն շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:



## Բանավեճ

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է: Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում՝

. ձևավորել նոր գիտելիքներ

. ձևավորել հաղորդակցական հմտություններ

. սովորողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին

. խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան

. սովորողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու

Հարցում

## Մտագրոհ

Մտագրոհը գաղափարների վերարտադրման մեթոդ է: Մեթոդի գլխավոր գործառույթը մտքերի գեներացիան է: Մեթոդի անցկացման կանոններն են՝

. ցանկացած քննադատության բացակայություն

. գաղափարների խրախուսում

. մասնակիցների հավաքագրում

. զուգորդումներ

. բոլորի մտքերի գրառում

. վերջնական վերլուծության ժամանակը

Մեթոդի կիրառման ժամանակ ստեղծագործական մտածողությունն անցնում է երեք փուլով՝

. մտքերի գեներացիա

. մտքերի վերլուծություն և գնահատում

. մտքերի կիրառում կոնկրետ իրավիճակում




**Վենի դիագրամ**

Մեթոդը կիրառվում է գաղափարները հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու համար:

## ԳՈՒՍ

Մեթոդը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը կարդալու ընթացքում:

### Գործնական և դերային խաղեր

Մանկավարժական՝ գործնական և դերային խաղը ակտիվ մեթոդ է: Գործնական և դերային խաղերը պրոբլեմային հանձնարարությունների տեսակներից են: Այս մեթոդի կիրառման դեպքում ուսումնական նյութի փոխարեն օգտագործվում է իրական իրավիճակների բեմադրումը, իսկ <<դերերը>> կատարում են սովորողները:

Մանկավարժական խաղի հաջողությունը պայմանավորված է՝

. ուսանողի տեսական պատրաստվածությամբ,

. մասնագիտական հմտությունների տիրապետմամբ,

. ստեղծագործական մտածողության զարգացմամբ,

. ռեֆլեքսիայի զարգացմամբ

### Նախագծային մեթոդ

Մեթոդի նպատակն է՝

. սովորեցնել սովորել

. ուղղորդել իմացական գործընթացը

. խթանել հետազոտական գործընթացը

. զարգացնել ստեղծագործական միտքը

. ինֆորմացիան վերլուծելու կարողության զարգացում

. ինտելեկտուալ գործունեության սեփական փորձի ձեռք բերում




**Տ-աձև աղյուսակ**

Մեթոդական ճկուն միջոցներից է, որը կիրառվում է միևնույն հասկացության, միևնույն խնդրի երկու կողմերը համեմատելու համար:

**Փոխներգործուն նշանների համակարգ**

Արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է սովորողին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

Կարդալու ընթացքում տրված նշանները ծառայում են որպես տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

**Աշխատանք փոքր խմբերով**

Ուսուցման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս դասընկերների հետ փոխանակել իրենց մտքերն ու փորձը, համատեղ լուծել խնդիրներ: Մեթոդի կիրառման ժամանակ սովորողները գիտակցաբար և ակտիվ համագործակցության մեջ են մտնում, քանի որ ունեն ընդհանուր մի նպատակ:

**Խմբավորում**

Մեթոդը գրավոր վարժություն է, որը նպաստում է տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների՝

. իմացական ոլորտի

. ընկալումների

. պատկերացումների զարգացմանը

**Գաղափարների քարտեզագրում**

Մեթոդը մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է: Այն օգնում է՝

. գիտակցված ձևով սովորել

. ընդունել նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնել, թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում:

**Մտածի՛ր, զուգորդի՛ր, մտքեր փոխանակի՛ր**

Մեթոդի կիրառման ժամանակ տրվում են հարցեր, որոնք երկակի պատասխան են ենթադրում: Մտքերի փոխանակման միջոցով սովորողները փորձում են երկակի պատասխանից գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է տվյալ թեմայի ընդհանուր գաղափարը:

## Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքները վերլուծելուց հետո եկել եմ հետևյալ եզրահանգումների.

. Մանկավարժական մեթոդները նպաստում են սովորողի ստեղծագործական, հաղորդակցական, ինքնուրույն գործունեության, կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում են բարոյական որակներ, բարձրացնում սովորողների առաջադիմությունը և ուշադրությունը։

. Ակտիվ մեթոդները միջին դպրոցում կիրառվում են արդյունավետ և նպաստում ուսուցման որակի բարձրացմանը, ինչպես նաև սովորողների ստեղծագործական, համագործակցային, ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը։

. Ակտիվ մեթոդների շնորհիվ սովորողները ակտիվորեն մասնակցում են պլանավորված դասերին, որովհետև նման ձևով դասերն ընթանում են ավելի հետաքրքիր ու մատչելի։ Նաև նպաստում են մեծ ծավալ ունեցող ուսումնական նյութի ավելի հեշտ և մատչելի յուրացմանը, կարողանում են ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել գործնականում։

. Ակտիվ մեթոդների կիրառումը միջին դպրոցում կապված է ուսումնական նյութի բարդությունից, , ծավալից ու ստեղծված իրավիճակից։ Ակտիվ մեթոդների ընտրությունը դյուրամարս է, ուսուցիչը կարող է հեշտությամբ հարմարեցնել միջին դպրոցի սովորողների հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին։

**Օգտագործված գրականության ցանկ**

Ամիրջանյան Յու. Ա. , Սահակյան Ա. Ս. , ,,Մանկավարժություն,, Երևան, 2005թ.
,

Алехин А. Ю. Общие методы обучения в школе, Москва,1983,

Առարկայական չափորոշիչներ

Балаев А. А. Активные методы обучения., Москва, 2006г.

Օրվա դասի պլան 1

**Լեզվական նյութի ուսուցումը բանաստեղծությունների հիման վրա**

**Դասարանը՝** 6-րդ

**Առարկան՝** Մայրենի

**Դասի թեման՝** Վահագն Դավթյան <<Զվարթնոցի արծիվը>>: Լեզվական նյութը՝

Համառոտագրություն

**Դասի տիպը՝** Ինտեգրված դաս, գիտելիքների ամրապնդման և նորի յուրացման

**Դասի նպատակը՝** 1. կարողանալ գեղեցիկ արտասանել

2. իմանալ բանաստեղծության արտահայտած գաղափարը
3. թեմայի վերաբերյալ իր կարծիքն արտահայտել՝ գաղափարները հաստատելով, վկայություններ և փաս տարկներ օգտագործելով
4. կարողանալ խոսքը համառոտագրել՝ կիրառելով համա պատասխան կանոններ
5. բանաստեղծության միջոցով զարգացնել ստեղծա գործական միտքն ու երևակայությունը

**Դասի կահավորումը՝** Զվարթնոց տաճարի գունանկար, պատմամշակութային այլ կոթողների ալբոմ, հարցաթերթիկներ

**Դասի մեթոդներ՝** մտագրոհ, մտքի քարտեզ, 5 րոպեանոց շարադրանք, խմբային աշխատանք դասանյութի հատվածներով

**Միջառարկայական կապ՝** պատմություն, աշխարհագրություն, կերպարվեստ

**Ներառարկայական կապ՝** հայոց լեզու

**Դասի կառուցվածքը՝** ԽԻԿ

1. **Խթանման փուլ-**Ի՞նչ պատկերներ եք տեսնում բանաստեղծության մեջ։

Կազմել մտքի քարտեզ՝ Արծվի խորհուրդը

2. **Իմաստի ընկալման փուլ-** Բանաստեղծությունն արտասանել, լրացնել

Քարտեզը երեխաների հարց ու պատասխանով։

Գրել 5 րոպեանոց շարադրանք՝ տարբեր խմբերին տարբեր առաջադրանքներով.

1. Հայաստանի ծանր անցյալի պատկերումը
2. Նկարագրել քարե արծիվը
3. Քարե արծվի խորհուրդը. հայոց հանճարի իմաստը

Ապա բոլոր խմբերին տրվում է հետևյալ առաջադրանքը.

Ովքե՞ր են հայոց հանճարի միտքը կրողները. գրել դասագրքի բանաստեղծությունների հեղինակների անունները համառոտ։

**3. Կիրառում.** Երեխաները գրում են Վ. Տերյան, Եղ. Չարենց, Հովհ. Շիրազ, Ս. Կապուտիկյան, Ավ. Իսահակյան, Հովհ. Թումանյան և այլն։

Հետևություն է արվում. համառոտագրությունը բառի կրճատ գրությունն է, որն անհրաժեշտ է խնայելու գրելու նյութի տեղն ու ժամանակը։

Խմբերը շարունակում են լրացնել տարբեր գիտությունների մեջ գործածվող համառոտագրված հասկացություններ։

Յուրաքանչյուր խումբ իր գրած օրինակների հիման վրա նշում է համառոտագրելու կանոնները, կետադրվելու և առանց կետադրության դեպքերը։

**Տնային հանձնարարություն՝**

1. Համառոտագրել մեզ հայտնի նշանավոր հայերի անունները։

2. Գրել փոքրիկ պատմություն Զվարթնոցի արծվի մասին՝ գործածելով համառոտագրություններ։

## Օրվա դասի պլան 2

**Դասարան՝** 5-րդ

**Առարկա՝** Մայրենի

**Դասի թեմա՝** Արտադասարանական ընթերցանություն. հեքիաթի ժամ

**Դասի նպատակ՝** Կապակցված խոսքի զարգացում, արտահայտիչ ընթերցանության կարողությունների զարգացում, ազատ, անկաշկանդ խոսք կառուցելու հմտությունների զարգացում, ընթերցասիրության խթանում

**Խնդիրները՝ ուսուցողական**

1. Մաքուր, գեղեցիկ հայերենով արտահայտվելու կարողություն

2. սեփական խոսքի նկատմամբ լինել ուշադիր և պատասխանատու

3. տեքստի բովանդակության, վերարտադրության հմտությունների զարգացում

4. շտկողական- զարգացողական, հատուկ և թույլ կարողություններով երեխաներին հնարավորինս ներգրավել դասին՝ նախապես պատրաստած առաջադրանքներով:

**Դասի տիպը՝** խառը

**Մեթոդներ՝** մտագրոհ, Т-աձև, տոհմածառ, Վենի դիագրամ, ԳՍՈՒ, բեմականացում

**Դասի կահավորումը՝** հեքիաթների գունազարդ գրքեր, հեքիաթների մոտիվներով համր նկարներ, մատիտներ

**Ներառարկայական կապ՝** Հովհ. Թումանյան, Վիլյամ Սարոյան, Ղազարոս Աղայան, Անդերսեն և այլն

**Միջառարկայան կապ՝** Նկարչություն

**Դասի դաստիարակչական կողմը՝** Արդիականացում, <<Իմացիր՝ ուրիշի համար փոս փորողը ինքն է ընկնում մեջը>>:

1. **Խթանման փուլ**

Ընթացքը՝ Նախագիտելիքների վերհանում, աշակերտների ուշադրության գրավում, հետաքրքրությունների ստեղծում և ներգրավում դասին: Գլխաբառ ,,Հեքիաթ>>: 5րոպե

**2. Իմաստի ընկալման փուլ**

1. Երեխաներից ամեն մեկը պատմում է իր նախընտրած հեքիաթը /հակիրճ/:

2. Ուսուցչի ուղղորդմամբ արժևորվում է հեքիաթի իմաստը։

3. Պատասխանում են ներքոհիշյալ հարցերին.

ա/ հեքիաթում ժողովուրդը ի՞նչ է արտահայտել,

բ/ քանի՞ խմբի են բաժանվում հեքիաթները / հրաշապատում կամ կախար

դական, կենդանական, իրապատում/,

գ/ մարդկային ի՞նչ հատկանիշներ են ներկայացվում հեքիաթում,

դ/ ինչպիսի՞ սկիզբ և ավարտ է ունենում հեքիաթը,

ե/ հեքիաթը, ինչպես առասպելը, էպոսը, ստեղծել է ժողովուրդը,

Հանձնարարել երկու խմբերին / նախապես ստեղծել երկու խումբ/ ստեղծել հայկական ժողովրդական հեքիաթների <<Տոհմածառը>>:

զ/ ինչպիսի՞ հատկանիշներով են օժտված հեքիաթների հերոսները. Т-աձև մեթոդով.

է/ հեքիաթների նմանություններն ու տարբերությունները, ընդհանրությունը՝ Վենի դիագրամ։ **15րոպե**

Հովի. Թումանյանի <<Խոսող ձուկը>> հեքիաթի բեմականացում:

**3. Կշռադատման փուլ**

Այսպիսով, հեքիաթը մեզ սովորեցնում է ԳՍՈՒ։

| Գիտեի | Սովորեցի | Ուզում եմ իմանալ |
|---|---|---|
| | | |

**4. Գնահատում՝ խմբային և անհատական**

Երեխանե՛ր, դուք հավատու՞մ եք հրաշքների։

<<Գիշեր- ցերեկ>> ենք խաղում և երեխաների սեղանին երկնքից իջնում է մեկական խնձոր։